Հավելված
Վեդի համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 15-ի
N 10-Ա որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Վեդի համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարին վերապահված իրավունքների շրջանակներում, նրա կողմից տեղական վճարների դրույքաչափի, մասնավորապես՝ նախադպրոցական և արտադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (այսուհետ՝ ՀՈԱԿ) մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նվազեցման արտոնություն (այսուհետ՝ արտոնություն) կիրառելու կարգը:

2. Համայնքի ղեկավարը տեղական վճարների նվազեցման արտոնությունը կիրառում է դրույքաչափի 50-ից 100 տոկոսի չափով՝ ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:

2.ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3. Արտոնությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.
1) երեխաների ծնողները (օրինական ներկայացուցիչները),
2) ՀՈԱԿ-ների տնօրենները:

3.ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Արտոնության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝
1) համայնքի ղեկավարին ուղղված դիմում կամ գրություն (այսուհետ՝ հայտ),
2) երեխայի, ծնողների (կամ օրինական ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթղթերի պատճենները,
3) տեղեկանք ՀՈԱԿ-ից, որտեղ հաճախում է երեխան (կամ երեխաները), անհրաժեշտության դեպքում՝ երեխայի բնութագիրը,
4) հաշմանդամությունը հաստատող փաստաթուղթ (եթե երեխան կամ ծնողը հաշմանդամ է),
5) ընտանիքի սոցիալական կարգավիճակը հավաստող այլ անհրաժեշտ փաստաթղթեր (ծնողի մահվան վկայականի պատճենը, բազմազավակ ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները,
6) տեղեկանք երեխայի բնակության վայրի մասին:

5. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված փաստաթղթերից որևէ մեկի բացակայությունը հիմք է դիմումը մերժելու համար:

6. Տեղական վճարի գծով, համայնքային ենթակայության յուրաքանչյուր կազմակերպության ծառայությունից օգտվելու համար կարող են սահմանվել տեղական վճարի նվազեցման միայն մեկ տեսակի արտոնություն:

7. Սույն որոշմամբ սահմանված արտոնությունից կարող են օգտվել միայն Վեդի համայնքի բնակիչ հանդիսացող երեխաները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.ՍՏԵՓԱՆՅԱՆ